Ai Piedi Dell' Ararat: *Artaxata E L'Armenia Ellenistico-Romana.—Studi E Materiali Di Archeologia*. 10, Torino, 1998, XXIX + 165 p., 95 ill. (AMINA G. KANETSIAN, ZORES D. KHACHATRIAN).

Լույս տեսավ հին Հայաստանի տնտեսությանն ու մշակութային ինդիրներին նվիրված մի նոր աշխատություն՝ «Հունահռոմեական դարաշրջանի Արտաշատն ու Հայաստանը» գիրքը։ Բուն ուսումնասիրությանը նախորդում է Թուրինի համալսարանի պրոֆեսոր Անտոնիո Ինվերնիցցիի ընդարձակ առաջաբանը, ուր լայն քաղաքական խորքի վրա իտալացի ընթերցողին ներկայացված է հելլենիստական Հայաստանի պատմամշակութային ընդհանուր նկարագիրը։ Հատկապես ուշադրություն է դարձված Հայաստանի և հարևան մի շարք հելլենիստական երկրների ու Հռոմի փոխառնչություններին։ Աշխատանքը բաժանված է երկու առանձին ուսումնասիրությունների, որոնց հեղինակները երրորդ տասնամյակն է ինչ զբաղված են հին Հայաստանի ու հատկապես Արտաշատի հնագիտության ու ճարտարապետության հարցերով։ Իտալացի գործընկերների հետ պատրաստած հրատարակությունը, իսկապես, դրական երևույթ է հայագիտության մեջ, և նման կարգի աշխատություններ, որոնք, ցավոք, առայժմ քիչ են, ճանապարհ են հարթում հին ու նոր Հայաստանի մշակույթը քաղաքակիրթ աշխարհին մատուցելու համար։

Առաջինը, որ գրավում է ընթերցողին, նյութի **բազմազանությունն է**։ Այստեղ շատ ավելի ակնառու, քան մի շարք այլ աշխատություններում, ներկայացվում է հին Հայաստանի, հատկապես քաղաքամայր Արտաշատի մշակույթը՝ տարբեր թելերով կապված այլ երկրների հետ։ Լուսաբանող նյութն ընտրված է հմտությամբ և ճաշակով։ Անշուշտ, սրանում կարելի է նկատել, մասնավորապես, Ա. Կանեցյանի ձեռքը, որը տարիներ շարունակ առնչվելով թե՛ ճարտարապետական մանրամասների և թե՛ այլ ուղեկցող հնագիտական նմուշների հետ, կարողացել է, մեր կարծիքով, գտնել նյութի ցուցադրման լավագույն եղանակը։ Շատ հետաքրքիր է մի քանի առանցքային հնավայրերի ընձեռած մշակութային արժեքների հիման վրա հայ մշակութային երևույթների և միտումների իմաստավորման փորձը, թեև նման ընույթի ձեռնարկումը, անխուսափելիորեն, կարող է հանգիպել սահմանների. սակայն հեղինակներն այնուամենայնիվ ձեռնարկել են նաև այս համարձակ ու շնորհակալ աշխատանքը։ Շահեկան է հին Հայաստանին վերաբերող հնագիտական նյութը այս նոր աշխատության էջերում տեսնել համակարգված ձևով։ Անգամ այն դեպքում, երբ փաստական նյութը բավարար չի եղել, ուսումնասիրողները փորձել են լրացնել բացը։ Հայ մասնագետների առաջ դրված է եղել, ինչպես նկատվում է, մի բարդ խնդիր՝ օտար ընթերցողին ներկայացնել հիմնականում անծանոթ նյութական մշակույթ։ Կարծում ենք, հեղինակները երբեմն շեղվել են տեսական արահետներից գերազանցապես մի պատճառով՝ հնարավորին չափ մատչելի դարձնել պատմական իրողությունները։ Ծանոթանալով գրքին, ամենամեծ ցանկությունն է այն տեսնել վերահրատարակված այլ օտար լեզուներով, ինչպես նաև մայրենի լեզվով։ Մյուս, գուցեև սուբյեկտիվ, ցանկությունն է սույն աշխատության նոր հրատարակումներում փաստական «շարքային» նյութի կողքին տեսնել տեսական իր ընդհանրացումներ, որոնցով հնարավոր չի եղել հագեցնել որոշակի ծավալով և մոտեցման սկզբունքներով պատվիրատուի կողմից սահմանափակված այս իրոք արժեքավոր աշխատանքը։

Գիրքը զերծ չէ թերություններից։ Կուզենայինք անդրադառնալ դրանցից մի քանիսին, հաշվի առնելով հայագիտության մեջ ընդունված տեսակետները։

Ամինա Կանեցյանի բաժինը վերաբերում է «Հայաստանի անտիկ դարաշրջանի քաղաքներին ու բնակավայրերին» («Citta e Insediamenti Nell 'Armenia Di Eta Classica», էջ 1—94), և նրա հիմքում ընկած է ճարտարապետի թեկնածուական անտիպ ատենախոսությունը։ Չորս գլուխներից առաջինում հեղինակը ծանոթացնում է հիմնականում գրավոր աղբյուրներից ու հնագիտական պեղումներից հայտնի՝ անտիկ Հայաստանի քաղաքներին ու առանձին հուշարձանների (էջ 3—12)։ Նյութն, անշուշտ, կհետաքրքրի արևմտյան ընթերցողին, որին մատչելի չեն Հ. Մանանդյանի դասական աշխատությունները և Հայաստանում մոտ կես դար ընթացող հնագիտական պեղումների արդյունքները։ Թեման լուսաբանող միակ բարտեզը (նկ. 1), ցավոք, թերիներ ունի. պատշաճ չափով չի արտացոլում Հայաստանի քաղաքաշինական

վերելքը և քաղաքական սահմանները։ Չեն առանձնացված Մեծ Հայքը, Փոքր Հայքն ու Մոփքը, որոնք բազմիցս հիշատակվում են գրքում։ Եփրատն ու Արածանին թափվում են Հալիս գետը։ Նպատակահարմար չէ նույն պայմանական նշանով ներկայացնել Արտաշատը և այնպիսի ամրոցներ ու բնակավայրեր, ինչպես Կարնաղբյուրն ու Ակունքը, այն դեպքում, երբ Արմավիրն ու Վաղարշապատն ավելի «մանր» լեգենդներով են նշված, որոնք թերևս քարտեզագրի անբարեխղճության հետևանք են։ Անի-Կումայրի նշված է Եփրատի աջ ափին և մ. թ. ա. IV դարում ներկայացվում է որպես Փոքր Հայքի մայրաքաղաք (էջ 4—5)։ Խառնվում է ժամանակագրություններ (էջ 5), հռոմեական կենտրոններ Սատաղն ու Մելիտենեն դասվում են հելլենիստական քաղաքների շարքը, որոնց հետևվում են վաղ հայկական ժամանակի հուշարձաններ և այլն։ Որոշ դեպքերում հեղինակը մոռանում է իրողություններ ներկայացնելիս հղել աղբյուրներ, ինչը օգտակար կարող էր լինել հարցի լուծության մեջ խորանալ ցանկացող օտար ընթերցողի համար։ Հանդիպում են չնկատված վրիպակներ. օրինակ՝ 9-րդ էջում Ա. Ա. Իվանովսկին դառնում է Ա. Ա. Իվանսկիյ, 2-րդ էջում Խոսրով Կոտակ արքան՝ Խոսրով Կոտայր և այլն։ Հեղինակը Կարին քաղաքը դիտելով մ. թ. I—II դդ. կոնտեքստում (էջ 9), ներկայացնում է որպես «խոշոր առևտրական հանգույց»։ Այնուամենայնիվ, աշխատության տվյալ հատվածը թերություն ոչ թե այս մասնակի վրիպումներն են, այլ աշխարհագրական ու ժամանակագրական որոշակի սխալով նյութը մատուցելու սկզբունքի բացակայությունը։

Երկրորդ գլուխը նվիրված է «Հայաստանի քաղաքների ու ամրոցների բաղաքաշինական բնութագրին» (էջ 13—36)։ Սա, անշուշտ, տեսական աշխատանքի արդյունք է։ Ցավոք, վերլուծվող հուշարձանների ցանկը բավական համեստ է։ Առարկության տեղիք են տալիս հեղինակի եզրահանգումներից մի բանիսը՝ որ Արմավիրի միջնաբերդի կենտրոնական մասն ըստ հետազոտողի ուներ «պալատական-տաճարական բնույթ» (էջ 13), արևելյան մասը նախատեսված էր զորանոցային, օժանդակ բնույթի շինությունների («և պաշտպանում էր միջնաբերդի կենտրոնը») և «ռազմական ազնվականության» շենքերի համար, մինչդեռ, արևմտյան հատվածում՝ «համաձայն կառուցապատման, տպրում էր բնակչության ընչազուրկ մասը» (էջ 14)։ Դժվար է պատկերացնել, որ հզոր երկրի մայրաքաղաքում տիրում էր սոցիալական և ֆունկցիոնալ խառնաշփոթ (խոսքը միջնաբերդի մասին է)։ Ներկայացված մյուս բաղարի մասին հեղինակի դիտարկումները ավելի հետաքրքիր են։ Այնուամենայնիվ, Արտաշատի պեղումների ներկա փուլի արդյունքներից ելնելով, համոզիչ չեն հեղինակի պնդումները քաղաքի տարբեր բլուրների ֆունկցիոնալ նշանակության մասին. համար 1 բլրի մասին ասված է, որ այն ունի «միասնական ֆունկցիոնալ նշանակություն»՝ տեսնելով այստեղ «բնակելի ու տնտեսական սենյակներ՝ տեղում գտնվող կայազորի զինվորների և նրանց ընտանիքների համար» (էջ 22—23), «ռազմական-պաշտպանական նշանակություն»՝ ելնելով նրանից, որ բլրի վրա, վերը նշվածների կողքին. «բնակվում էր ռազմական ազնվականությունը» (էջ 71)։ Մանրամասն, պատշաճ մակարդակով ներկայացնելով նաև 8-րդ բլուրը, հեղինակը կրկին կատարում է բավական վիճելի ենթադրություն. «8-րդ բլուրը արհեստավորական էր, այնտեղ էին գտնվում այնպիսի հասարակական կառույցներ, ինչպես բաղնիքը, արհեստանոցները, ինչպես նաև Արտաշատում ժամանակավորապես հանգրվանած հռոմեական զինվորների և տեղական հարուստ արհեստավորների տները» (էջ 71)։ Վերոհիշյալ մեկնությունը ոչ միայն իախտում է որևէ ֆունկցիոնալ պատկերի դիտման հնարավորություն, այլև փորձում է միավորել անհամատեղելին։

Տիպարանորեն քննության առնված մյուս հուշարձանը Գառնիի նշանավոր ամրոցն է։ Հեղինակը իրավացիորեն ամրոցի հիմնադրումը վերագրում է մ. թ. ա. III—II դդ. (էջ 28), նշելով, որ «հռոմեական շրջանում պարիսպը նույնությամբ վերականգնվում է», և հուշարձանը սրանով թնակոխում է իր երկրորդ շինարարական փուլը։

Ցավոք, Մոփքի և Փոքր Հայքի ամրոցների վերաբերյալ, ըստ էության, համեմատական նյութ չի բերվում, և հին Հայաստանի ամրոցաշինության վերաբերյալ հեղինակի եզրակացությունները հենվում են առավելապես Գառնիի և Հացավանի ամրոցների վրա։

Հաջորդ՝ երրորդ գլուխը, գրքի ամենաարժեքավոր մասերից է (էջ 37—63)։ Այստեղ առկա են մի շարք հուշարձանների ճշգրիտ չափագրություններ, ճշգրտված են դրանց վիճելի մանրամասները, համոզիչ են համադրումները։ Վարկածային է, թերևս, հեղինակի դիտողությունն այն մասին, որ «Արմավիրի հսկայական շինությունը» ուրարտական դարաշրջանում ուներ «պալատական նշանակություն՝ բարձրաստիճան քրմական դասի համար», իսկ մ. թ. ա. III դարում այն վերածվում «աշխարհիկ պալատական կառույցի» (էջ 37)։ Ի դեպ, բլրի այդ մասում խորհնացին տեղադրում էր Արևդպիի տաճարը (I, 8)։ Հեղինակի ներկայացրած Գառնիի ամրոցի շինությունների վերակազմությունը կատարված է մասնագիտական հմտությամբ։ Ուշագրավ է «կառույցների և շինությունի տե-

սակներին» նվիրված այս գլխում Երվանդաշատի հնագույն շինության վերակառուցման նախագիծը (նկ. 31, էջ 41), որը դիտվում է «ունևոր ազնվականի մենաշենք»։

Հետաքրքիր դիտարկումներ կան նաև բազնիքների և ավազանների վերլուծությանը վերաբերող էջերում։ Մասնավորապես, համոզիչ է շինարարական մանրամասների վերականգնումը։

Վերջապես, արժեքավոր ու ինքնատիպ են նաև հեղինակի դիտողությունները խճանկար ու աղյուսապատ հատակների, սյան տարբեր տիպի խարիսխների, հիպոկաուստ ոճի բաղնիքների վերին հատակները պահող կավե սյունակների, ջրմուղի խողովակների ու բաժանարարների մասին։ Ա. Կանեցյանի աշխատանքը կարևոր է նախ և առաջ փաստական նյութի ընդգրկմամբ, քանի որ սա առայժմ անտիկ Հայաստանի քաղաքաշինական մշակույթի մանրամասներին նվիրված սակավաթիվ աշխատություններից է։

* * *

Գրքի երկրորդ կեսը խորագրված է «Արտաշատը հին Հայաստանի մայրաքաղաք» («Artaxata Capitale Dell 'Armenia [IIsec. A. C.—IV D. C.]») (էջ 95—158)։ Միմյանց հաջորդող յոթ գլուխներում և վերջաբանում հնագետ Ժորես Խաչատրյանը ներկայացնում է քաղաքի նյութական ու հոգևոր մշակույթը՝ շաղկապված հին Հայաստանի պատմամշակութային ժառանգության հետ։ Դատելով օգտագործված սկզբնաղբյուրների ստվար ցանկից՝ աշխատանքի աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես Բ. Առաքելյանի, անձամբ հեղինակի նախորդ աշխատությունները[1], այնպես էլ Հայաստանին և հարակից երկրներին նվիրված հայ և օտար գիտնականների հրատարակությունները։ Արտաշատի կյանքը հեղինակը մատուցում է մշակութային կոթողների, դրանց մնացորդների օգնությամբ և, թերևս, գրքի ծավալից ու կառուցվածքից ելնելով է, որ ըստ էության, չի ծավալվում համակարգված մշակութային եզրահանգումների, սոցիալական ու պատմական բնույթի հարցերի շուրջ։ Առաջաբանում Ժ. Խաչատրյանն առաջարկում է մի հետաքրքիր միտք՝ որ Արտաշատը «կառուցվել է լիտուրգիաների միջոցով» և, միևնույն ժամանակ, բնակեցվել է «սինոյկիսմոսի» եղանակով։ Ցանկալի կլիներ զարգացնել այդ տեսակետը և ցույց տալ, թե արդյոք համատեղելի՞ են այս երկու երևույթները և եթե այո, ապա ինչ ձևով են դրանք դրսևորվում, ինչ ուժերի մասնակցությամբ։

Երբ հեղինակը դատողություններ է կատարում այն բանի շուրջ, որ Անահիտը Հայաստանի, իսկ Միհրը՝ Արտաշիսյան և ապա՝ Արշակունի թագավորների հովանավոր աստվածներն էին (էջ 98), պետք էր չշրջանցել նաև Գ. Տիրացյանի միտքը («որպես դինաստիական աստվածներ Միհրն ու Անահիտը հանդես են գալիս միասին, համենայնդեպս, սկզբում՝ Արմավիրում, մինչդեռ որպես համազգային աստվածներ նրանք պաշտամունքի առարկա էին առանձին-առանձին»)[2] և պարզաբանել սեփական մոտեցման հիմքերը։

Բուն ուսումնասիրությունը իր ձևի մեջ հետաքրքիր և, մեր կարծիքով, հաջողված ձևով է՝ ներկայացնելով հին Արտաշատի մշակույթն ու տնտեսական կյանքը։ Փորձված հնագետի բազմամյա պրպտումների արդյունքում, գրքում տեղ են գտել բազմաթիվ նոր տվյալներ։ Երևանի հայտնի տվյալները, ներկայացվելով նորահայտ նյութի հետ միասին, ավելի լիարժեք են բնութագրված, պարզ ցուցադրելով այն տեսական շարժը, որ կատարված է հին Արտաշատին առնչվող երկու հաշվետու մենագրություններից հետո անցած մեկ ու կես տասնամյակում։ Այս առումով, հին Արտաշատի նյութական մշակույթը լուսաբանվում է երկու հայեցակետով՝ Արտաշատը և հին Հայաստանը, Արտաշատը և հունա-հռոմեական աշխարհը։ Ցանկացած տեղեկատու-տեսական աշխատանք, անիուսափելիորեն, զերծ չէ թերություններից, մի կարգի նյութին նախապատվություն տալու, իսկ մյուսին ավելի փոքր տեղ հատկացնելու իրողությունից, որոնք, ինչ խոսք, չեն նսեմացնում աշխատանքի ընդհանուր արժեքն ու գնահատականը։

Գիրքը, որքան էլ հասցեագրված լինի օտար ընթերցողին, չէր կարող չարձագանքել նաև նոր հնագիտական տեսական խմորումներին. վերջերս փորձեր են արվում վերանայել հին Հայաստանի պատմության և մշակույթի պարբերացման ընդունված[3] կառուցվածքը (Մ.

---

1 Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատ II, անտիկ դամբարանադաշտեր (1971—1977 թթ. պեղումներ). Երևան, 1981։ Б. Н. Аракелян. Арташат I. Основные результаты раскопок 1970—1977 гг., Ереван, 1982. ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ։

2 Г. А. Тирацян. Вопросы преемственности официального культа в античной Армении.—«Լրարեր հաս. գիտ.», 1985, № 10, с. 60.

3 Г. А. Тирацян. Опыт периодизации истории материальной культуры древней Армении.—ՀԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 2.

Զարդարյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով), որ շատ դովելի է, սակայն ցավոք, կարիք ունի նոր փաստական նյութի ընդգրկման, հատկապես Արևմտյան Հայաստանից։ Ժ. Խաչատրյանը կողմնակից է ավանդական տեսակետին։ Սակայն ցանկալի կլիներ հեղինակի՝ «ոչ անտիկ ժամանակաշրջանի մեջ ողջ մ. թ. IV դարի ընդգրկումը (էջ 99) հիմնավորված տեսնել մշակութային կամ քաղաքական ուղենիշերով։ Այս առումով, եթե Հռոմի համար սահմանագիծ ընդունված 395 թ. (կայսրության բաժանման տարեթիվը), ապա Հայաստանին ավելի հարիր են 385/387 թ.՝ որպես Հայաստանի բաժանման ժամանակ կամ էլ 364—368 թթ.՝ որպես հին Հայաստանի քաղաքների ու քաղաքային կյանքի կործանման թվականներ։

Բազմակողմանիորեն անդրադառնալով հին Արտաշատի տարածքի ֆունկցիոնալ տրոհման խնդրին, հեղինակը գտնում է, որ 2-րդ բլրում միաժամանակ կենտրոնացված էին պալատական-վարչական համալիրը, ավագանու բնակարանները, զորանոցները, զինանոցները (էջ 103)[4], որ իրականում համախմբում է մի քանի ֆունկցիաներ։ Նույն այս հարցի առնչությամբ կատեգորիկ է հնչում այն միտքը, թե քաղաքը «պաշտպանվում էր աշխարհազորի օգնությամբ» (էջ 104)։ Ընդհանրապես, այս գլխում ցանկալի էր առարկայորեն ներկայացնել հելլենիստական Արտաշատի կոմունալ պատկերն ու քաղաքային մշակույթը՝ դրանք հռոմեական մշակույթին հակադրելիս և վերջինիս զարգացման «ավելի բարձր մակարդակը» մատնանշելիս։

Երկրորդ գլխում՝ տեսականորեն շատ հետաքրքիր է Հայաստանում թոնիրների կիրառության ժամանակի սկիզբը անտիկ ժամանակ տանելու միտքը (էջ 118), որ առայժմ չի իջնում վաղ միջնադարից ներքև։ Արդյո՞ք թոնիրի ավելի վաղ գոյության հիմքը մետաղական ակիներն են, թե հեղինակն ունի այլ թվագրող նյութ, որ ինչ իսկ պատճառներով այստեղ չի բերված։

Հաջորդ՝ 3-րդ գլուխը, որ վերաբերում է արհեստներին, լիարժեք ներկայացնում է այն տեսության այս ճյուղը։

Բովանդակալից է հատկապես արվեստին նվիրված 5-րդ գլուխը (էջ 143—151)։ Երկմտանքի տեղիք է տալիս միայն հեղինակի այս նկատողությունը, թե «Հայաստանում ոգնրվա-կանությունը կառուցում էր հունա-հռոմեական տիպի թատրոններ» (էջ 151)։ Տիգրանակերտի բացի (տե՛ս Պլուտարքոս) նման արժանավատ հիշատակություն կամ հնագիտական մնացորդ, մասնավորապես Արտաշատի մասին, իրականում առայժմ չունենք։

Տեսական առումով ուշագրավ է այնուհետև հաջորդ՝ 6-րդ գլուխը (էջ 153—154), որը նվիրված է կրոնական կյանքին։ Այստեղ, հարուստ համեմատական նյութի ընդգրկումով, լուսաբանվում են հին Հայաստանի հավատալիքների զանազան մանրամասներ։ Դժվար է հիմնավորված համարել Հայաստանի նշանավոր ութ տաճարներից երկուսի տեղափոխումը հին Արտաշատ՝ այստեղ Մեծ Հայքի արքաների կողմից զոհեր մատուցելու նպատակով։ Ավելի տրամաբանական կլիներ խոսել նույն աստվածություններին կամ նախնիներին նվիրված նոր տաճարների հիմնադրման մասին։ Նույն գլխում ուշագրավ, բայց վարկածային է նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքային կենտրոնի տեղայնացումը Արտաշատի 6-րդ բլրի վրա։ Ամենահաստատուն թվացող կռվանն այս դեպքում համոզիչ չի հնչում. իրոք, հին շատ մատուռներ ու եկեղեցիներ կանգնեցված են հեթանոսական սրբավայրերի հիմքերի վրա, սակայն Խոր Վիրապի եկեղեցին (բավական ուշ վերաշինված) կանգնեցված է Գրիգոր Լուսավորչի բանտարկության տեղի սրբագործման պատվին, իսկ այդ վայրը, ինչպես հավատում է պատմական ավանդությունը՝ հին Արտաշատի միջնաբերդի բանտն էր՝ նախատեսված ծանրագույն հանցագործների համար. հակառակ դեպքում հեթանոսի հայեցակետից անհասկանալի կմնար խորվարար քրիստոնյայի բանտարկությունը հայ հեթանոսական տաճարում։

Հին Արտաշատի պաշտամունքը լուսաբանող գյուտերից են կրաքարե եղջյուրները։ Հեղինակի կարծիքով, 6-րդ բլրից գտնված այս նյութը խորհրդանշում էր «ցլերին» և միևնույն ժամանակ պատկանում էր Անահիտի տաճարին։ Իրականում, Անահիտը խորհրդանշում էր հակառակ սեռի եղջերավոր կենդանուն (տե՛ս Պլուտարքոս. Լուկուլլոս)։

Բավական հետաքրքիր է հեղինակի նկատողությունը, թե դրամներն ազդում էին Հայաստանի արվեստի մյուս բնագավառների վրա։ Սա ցանկալի կլիներ լուսաբանված տեսնել որոշակի օրինակներով, առավել ևս, որ առայժմ ընդունված է մոնումենտալ արվեստի ազդեցությունը դրամների վրա[6]։

---

4 Տե՛ս նաև՝ Ж. Хачатрян, А. Тоникян. Градостроительные аспекты древнего Артаната.—Архитектурное наследство, М., 1990, № 37, с. 29.

5 Ժ. Խաչատրյան. Արտաշատ II. Երևան, 1981, էջ 69, նկ. 29—10։

6 Ավելի հանգամանալի տե՛ս А. Н. Зограф. Античные монеты.—МИА, №16, М.—Л., 1951.

Ուշադրության է արժանի հեղինակի նկատառումը, որ Արտաշատի ուրարտական դարաշրջանի պարիսպը հելլենիստական շրջանում հարմարեցվել է նոր պահանջներին (էջ 104)։ Հեղինակը, հավանաբար, իրավացի է, երբ Արտաշատի գլխավոր փողոցների ուղղվածությունը հարավից հյուսիս բացատրում է քամիներից պաշտպանվելու մտահոգությամբ։ Ընդունելի է և ուշագրավ հեղինակի դիտողությունները Արտաշատում հռոմեական քաղաքաշինության նոր ազդակներն ուրվագծելու խնդրում (էջ 118)։

Հայաստանում և նրա սահմաններից դուրս ճանաչված երկու մասնագետների աշխատությունը հաջողված մենագրություն է։ Սա [illegible] ուսումնասիրողների ու, նախևառաջ, հենց իրենց՝ երկու հեղինակների, բազմամյա աշխատանքի խտացված արդյունքն է։ Գիրքն իր փաստական հարուստ նյութերով (որոնց մի մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ) և մատենագիտական ցանկերով՝ հոսալի տեղեկատու է, և ընթերցողներին ծանոթացնում է հայագիտության մեջ մշակվող առասական խնդիրների մի ընդարձակ խմբի հետ։ Եթե իր այս արժանիքներով գիրքը հիանալի նվեր է օտար ընթերցողին, ապա իր մի շարք նոր հարցադրումներով պակաս օգտակար չ[illegible] նաև հայագետների՝ հնագետների և պատմաբանների համար։

Հ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ